5400	1.4 ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 5411 + տող 5421 + տող 5431 + տող 5441), այդ թվում՝	x	0,0	x	0,0
5411	- Հող	5411	0,0	x	0,0
5421	- Ընդերքային ակտիվներ	5421	0,0	x	0,0
5431	- Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431	0,0	x	0,0
5441	- Ոչ նյութական չարտադրված ակտիվներ	5441	0,0	x	0,0
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող 6100 + տող 6200 + տող 6300 + տող 6400), այդ թվում՝	x	-117215,4	x	-117215,4
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող 6110 + տող 6120 + տող 6130), այդ թվում՝	x	0,0	x	0,0
6110	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8111	0,0	x	0,0
6120	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8121	0,0	x	0,0
6130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8131	0,0	x	0,0
6200	ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող 6210 + տող 6220), այդ թվում՝	x	0,0	x	0,0
6210	ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8211	0,0	x	0,0
6220	ԱՅԼ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող 6221 + տող 6222 + տող 6223), որից՝	x	0,0	x	0,0
6221	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8221	0,0	x	0,0
6222	ՎԵՐԱՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8222	0,0	x	0,0
6223	ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8223	0,0	x	0,0
6300	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող 6310), այդ թվում՝	x	0,0	x	0,0
6310	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8311	0,0	x	0,0
6400	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող 6410 + տող 6420 + տող 6430 + տող 6440), այդ թվում՝	x	-117215,4	x	-117215,4
6410	ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8411	-117215,4	x	-117215,4
6420	ՕԳՏԱԿԱՆ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8412	0,0	x	0,0
6430	ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8413	0,0	x	0,0
6440	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8414	0,0	x	0,0

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ - Ն

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-ից 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել Սպիտակ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Սպիտակ համայնքում սահմանել տեղական տուրքեր.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար ՀՀ դրամ,

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար ՀՀ դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար ՀՀ դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար ՀՀ դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար ՀՀ դրամ,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար ՀՀ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար ՀՀ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար ՀՀ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար ՀՀ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար ՀՀ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար ՀՀ դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ.

11) համայնքի վարչական տարածքում տնային կենդանիներ՝ շներ, կատուներ, պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

12) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ավտոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար ՀՀ դրամ,

բ. թունդ ավտոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո ՀՀ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ երեք հարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ հարյուր հիսուն ՀՀ դրամ.

13) Սպիտակ համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար ՀՀ դրամ.

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար ՀՀ դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն ՀՀ դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն ՀՀ դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ.

17) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազար ՀՀ դրամ.

18) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակ համայնքում սահմանել տեղական վճարներ.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասնհինգ հազար ՀՀ դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար ՀՀ դրամ.

6) համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝

ա. բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճար՝

- բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հարյուր հիսուն ՀՀ դրամ,

բ. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճար՝

- առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն ՀՀ դրամ,

- հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան ՀՀ դրամ,

- վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ ՀՀ դրամ,

-գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ ՀՀ դրամ,

-արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ ՀՀ դրամ,

գ. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն ՀՀ դրամ,

դ. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն ենթակետի <<բ>> պարբերությամբ սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար ՀՀ դրամ, կամ

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար ՀՀ դրամ,

ե. Խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետրի համար՝ երեք հազար ՀՀ դրամ.

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ սույն հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված դրույքաչափի 20%-ի չափով՝ վեց հարյուր ՀՀ դրամ.

8) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց մեկ ամսվա համար՝ բնակմակերեսի յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար՝ փոխհատուցման վճար՝ տասը ՀՀ դրամ.

9) համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց, մեկ ամսվա համար՝ փոխհատուցման վճար մեկ երեխայի համար՝ հինգ հազար ՀՀ դրամ, փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից՝ Սպիտակ համայնքի բնակիչների համար.

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց, մեկ ամսվա համար փոխհատուցման վճար մեկ երեխայի համար՝

ա. երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար՝ երկու հազար ՀՀ դրամ՝ փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից՝ Սպիտակ համայնքի բնակիչների համար,

բ. գեղարվեստի դպրոցի ծառայություններից օգտվողների համար՝ երկու հազար ՀՀ դրամ. փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից՝ Սպիտակ համայնքի բնակիչների համար.

գ. մշակույթի տան խմբակների ծառայություններից օգտվողների համար՝ երկու հազար ՀՀ դրամ. փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից՝ Սպիտակ համայնքի բնակիչների համար.

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ հիսուն ՀՀ դրամ:

12) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց՝

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման համար՝ 1000 ՀՀ դրամ.

բ. Կենդանիների հիվանդությունների կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ 500 ՀՀ դրամ.

գ. Ծննդօգնության համար՝

- թեթև միջամտություն՝ 1 000 ՀՀ դրամ,

- ծանր միջամտություն՝ 5 000 ՀՀ դրամ.

դ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականիսարգելիչ պատվաստումների և արյունառման կամ այլ նմուշառման համար՝ (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)

- մանր կենդանի 100 ՀՀ դրամ,

- խոշոր կենդանի 200 ՀՀ դրամ.

ե. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ 200 ՀՀ դրամ.

զ. Ախտահանության համար՝ 1 քառ. մետր 200 ՀՀ դրամ.

է. Միջատազերծման համար (դեզինսեկցիա)՝ 1 քառ. մետր 100 ՀՀ դրամ.

ը. Կրծողների ոչնչացման համար (դեռատիզացիա)՝ 1 քառ. մետր 200 ՀՀ դրամ.

թ. Արհեստական սերմնավորման համար՝ 10 000 ՀՀ դրամ.

ժ. Կենդանու հերձման համար՝

- մանր կենդանի 1 000 ՀՀ դրամ,

- խոշոր կենդանի 3 000 ՀՀ դրամ.

ի. Կենդանիների նախասպանդային զննման համար՝

- մանր կենդանի 1 000 ՀՀ դրամ,

- խոշոր կենդանի 2 000 ՀՀ դրամ.

լ. Տեղեկանքի տրամադրման համար՝ 150 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, 86-րդ հոդվածի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28¹-րդ հոդվածի պահանջներով:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Որոշման նախագծով սահմանվում են համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր հանդիսացող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր՝ հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ու «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Որոշման նախագծի ընդունման նպատակն է տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող տեղական տուրքերի և տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող տեղական վճարների գանձման ապահովումը:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Որոշման նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում իրականացրած գործողությունների և համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների դիմաց իրականացնել համայնքի բյուջեի եկամուտների մաս կազմող տեղական տուրքերի և տեղական վճարների գանձումը:

ԱԿՏԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունվող ակտը նորմատիվ բնույթի իրավական ակտ է, քանի որ, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի

2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

Սույն որոշման նախագծի մշակման գործընթացում ներգրավված ստորաբաժանումներն ու անձինք են.

- 1.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
- 2.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին
- 3.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունվելու դեպքում Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿ ԱՆՔ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագիծն ընդունվելու դեպքում այլ իրավական ակտեր ընդունելու կամ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի «Սպիտակի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 62-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման թիվ 2 և թիվ 8 հավելվածները հաստատել նոր խմբագրությամբ,

2) թիվ 3 հավելվածում նշված «Սպիտակի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» բառերը փոխարինել «Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» բառերով,

3) թիվ 4 հավելվածում նշված «Սպիտակի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» բառերը փոխարինել «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» բառերով:

«Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ»
համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը՝ 21
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	160 000
Տնօրենի տեղակալ	1	150 000
Հաշվապահ	1	105 000
Թաղամասերում լիազոր ներկայացուցիչ	9	100 000
Գործավար-գանձապահ	1	95 000
Օպերատոր	1	95 000
Հյուան	1	92 618
Փականագործ	1	92 618
Վարորդ	3	120 000
Այլընտրանքային աշխատանքային ծառայող (բանվոր)	2	Դրամական բավարարումը՝ օրենքով սահմանված կարգով և չափով
ԸՆԴԱՄԵՆԸ՝	21	1 010 236

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

«Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային
կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և
պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատողների քանակը՝ 18
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Պաշտոնային դրույքաչափերը (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	140 000
Տնօրենի տեղակալ	1	105 000
Հաշվապահ	0,5	105 000
Գեղարվեստական ղեկավար-մեթոդիստ	1	92 618
Ռեժիսոր-խմբավար	1	92 618
Խմբավար	2	92 618
Տեխնիկ-մեխանիկ	1	92 618
Տնտեսավար	1	92 618
Հսկիչ-գործավար	1	92 618
Զբոսայգու հսկիչ	0,5	92 618
Օպերատոր	1	92 618
Հավաքարար	2	92 618
Հավաքարարի փոխարինող (1ամիս)		92 618
Պահակ	4	88 312
ԸՆԴԱՄԵՆԸ՝	17	1 722 046

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

«Սպիտակ-համայնքի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ
առևտրային կազմակերպության աշխատողների քանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատողների քանակը՝ 15
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Պաշտոնային դրույքաչափերը (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	130 000
Մեթոդիստ	0,25	115 000
Հաշվապահ	0,5	105 000
Երաժշտական ղեկավար	0,5	98 390
Լոգոպեդ-մանկավարժ	1	98 390
Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0,5	98 390
Դաստիարակ	2,24	98 390
Դաստիարակի օգնական	2	92 618
Խոհարար	1	92 618
Խոհարարի օգնական	0,5	92 618
Բուժքույր	0,5	95 000
Տնտեսվար	0,5	92 618
Օժանդակ բանվոր	0,5	92 618
Հավաքարար	0,5	92 618
Լվացարար	0,25	92 618
ԸՆԴԱՄԵՆԸ՝	11,74	1 162 168,1

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ
առևտրային կազմակերպության աշխատողների քանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատողների քանակը՝ 29

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Պաշտոնային դրույքաչափերը (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	150 000
Մեթոդիստ, ուսումնական գծով տեղակալ	1	115 000
Գլխավոր հաշվապահ	1	105 000
Երաժշտական ղեկավար/դաստիարակ/	1,5	98 390
Լոգոպեդ-մանկավարժ	1	98 390
Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1,25	92 618
Դաստիարակ	6,72	98 390
Դաստիարակի օգնական	6	92 618
Գործավար	0,5	92 618
Խոհարար	1	95 000
Խոհարարի օգնական	1	92 618
Բուժքույր	1	95 000
Տնտեսավար	0,5	92 618
Պահեստապետ	0,5	92 618
Օժանդակ բանվոր	0,5	92 618
Հավաքարար	0,5	92 618
Լվացարար	0,25	92 618
Դռնապան	1	92 618
Փականագործ, Էլեկտրամանտյոր	0,5	92 618
ԸՆԴԱՄԵՆԸ՝	26,72	2 624 880,8

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 112 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2020 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 01/111.1/09855-2020 գրությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Արայիկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0441-0022 կադաստրային ծածկագրով 0,0359 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասի:

2. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0441-0020 կադաստրային ծածկագրով 0,002 հեկտար և 06-006-0441-0006 կադաստրային ծածկագրով 0,00017 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասերի:

3. Սպիտակ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱԶԱԳԱՆ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՅ, ԱՌԱՆՅ ՄՐՅՈՒՅԹԻ,
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 72-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Վաչագան Հրաչիկի Խառատյանը 1990 թվականից, առանց իրավաբանական ձևակերպման, անընդմեջ ու բացահայտ տիրապետում է Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-00539-0009 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության հողամասերից 0,1468 հեկտար մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահողը, հիմք ընդունելով Վաչագան Հրաչիկի Խառատյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-00539-0009 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության հողամասերից 0,1468 հեկտար մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահողը, առանց մրցույթի, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով Վաչագան Հրաչիկի Խառատյանին (ծնված 07.08.2019թ.) տրամադրելուն:

2. Հողամասի տարեկան վարձավճարը սահմանել հողամասի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 30%-ի չափով՝ 903 ՀՀ դրամ:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ
ԱՆՑԿԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու կանոնակարգի 2.2-րդ ենթակետի՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի հերթական նիստերի
անցկացման ժամանակացույցը

1. 2021 թվականի փետրվարի 25-ին
2. 2021 թվականի ապրիլի 14-ին
3. 2021 թվականի հունիսի 10-ին
4. 2021 թվականի հուլիսի 13-ին
5. 2021 թվականի սեպտեմբերի 15-ին
6. 2021 թվականի հոկտեմբերի 14-ին
7. 2021 թվականի նոյեմբերի 18-ին
8. 2021 թվականի դեկտեմբերի 24-ին

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ԳՅՈՒԼԱԶՅԱՆ